**Հավելված N 1**
**ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## գնանշման հարցմանը մասնակցելու

"Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով հայտարարված գնանշման

հարցմանը 1-ին չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

"Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

"Ճանապարհ" ՍՊԸ - Հայաստանի Հանրապետության,
"Արցախճան" ՍՊԸ - Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:
երկրի անվանումը

"Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝
  "Ճանապարհ" ՍՊԸ – 03512651, "Արցախճան" ՍՊԸ - 00915384
  հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝
  "Ճանապարհ" ՍՊԸ - road@road.am, "Արցախճան" ՍՊԸ - arcaxchanllc2019@gmail.com
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝
  "Ճանապարհ" ՍՊԸ - ՀՀ, ք.Երևան, Աճառյան 60, "Արցախճան" ՍՊԸ - ք.Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24
  գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ "Ճանապարհ" ՍՊԸ - +37410627240, "Արցախճան" ՍՊԸ - +374628785
  հեռախոսի համարը

Սույնով "Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) բավարարում է ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում.

2) ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնանշման հարցման մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ "Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ -ին
  մասնակցի անվանումը

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:22:27 GMT+04:00

փոխկապակցված անձանց և (կամ) "Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ -ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս "Ճանապարհ" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ -ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)* և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| Բեզոյան Էդուարդ Կոլոմբոսի /Ճանապարհ ՍՊԸ միակ մասնակից/ | նույնականացման քարտ 000335752 տրվ. 24.06.2013թ. 006 կողմից | |
| Սողոյան Սերիկ Ստեփանի /Արցախճան ՍՊԸ մասնակից/ | Անձնագիր՝ AN 0468977, տրվ. 13.05.2013թ. 006 կողմից | |
| Չոբանյան Լիդա Սմբատի (Արցախճան ինստիտուտ ՓԲԸ միակ մասնակից) /Արցախճան ՍՊԸ մասնակից/ | Անձնագիր՝ AM 0553230, տրվ. 07.12.2011թ. 008 կողմից | |
| | | |

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:22:52 GMT+04:00

ՀՁ անդամ «ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ գլխավոր տնօրեն՝ Է. Բեզոյան

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

* Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

# ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ք.Երևան** **29.03.2021թ.**

«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 03512651, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Էդուարդ Բեզոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գործընկեր-1», մի կողմից և «Արցախճան» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 00915384, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Ռոբերտ Սողոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գործընկեր-2» մյուս կողմից, իսկ այսուհետ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերը պայմանավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ մասնակցելով ***ՀՀ քաղաքաշինության Կոմիտե****-ի* կողմից ***ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28*** ծածկագրով ***«Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների*** հայտարարված մրցույթին և ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչվելու դեպքում, այն իրականացնելու:

1.2. Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

1.2.1. «Գործընկեր-1»-ը որպես ավանդ ներդնում է՝

I. իր կազմակերպության կողմից նախկինում կատարված աշխատանքային փորձը և գիտելիքները

II. աշխատանքների իրականացմանը անհրաժեշտ, իրեն պատկանող մեքենամեխանիզմները ու սարքավորումները

III. համապատասխան փորձառությամբ և որակավորումով աշխատակազմ

IV. ֆինանսական միջոցներ

1.2.2. «Գործընկեր-2»-ը որպես ավանդ ներդնում է՝

I. իր կազմակերպության կողմից նախկինում կատարված աշխատանքային փորձը և գիտելիքները

II. աշխատանքների իրականացմանը անհրաժեշտ, իրեն պատկանող մեքենամեխանիզմները ու սարքավորումները

III. համապատասխան փորձառությամբ և որակավորումով աշխատակազմ

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:23:13 GMT+04:00

## 2. Ընդհանուր գործերը վարելու պայմանները

2.1. Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է «Գործընկեր-1»-ը:

2.2. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված ծրագրի շրջանակներում երրորդ անձանց հետ հարաբերություններում «Գործընկեր-2»-ի անունից բանակցելու, գործարք կնքելու համար «Գործընկեր-1»-ի լիազորությունը հավաստվում է «Գործընկեր-2»-ի կողմից նրան տրված լիազորագրով:

2.3. Կողմերի համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը վարում է «Գործընկեր-1»-ը:

2.4. Կողմերից յուրաքանչյուրն, անկախ այն բանից, լիազորված է վարել սույն պայմանագրով ընդհանուր գործերը, թե ոչ, իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

2.5. «Գործընկեր-2»-ը լիազորում է «Գործընկեր-1»-ին վերը նշված ծածկագրով մրցույթում հանդես գալ իր անունից, ստորագրել մրցութային առաջարկը, ինչպես նաև կատարել այլ գործուղություններ որոնք կպահանջվեն մասնակցից տվյալ մրցույթի շրջանակներում:

## 3. Կողմերի ընդհանուր գույքը

3.1. Կողմերի ներդրած գույքը, որի նկատմամբ մինչև ներդրումը նրանք ունեին սեփականության իրավունք, ինչպես նաև համատեղ գործունեության արդյունքում թողարկված արտադրանք և այդպիսի գործունեությունից ստացված եկամուտները համարվում են Կողմերի ընդհանուր բաժնային սեփականույթւոնը:

3.2. Կողմերի ներդրած գույքը, որին նրանք տիրապետում էին սեփականության իրավունքից տարբերվող հիմքերով, և որը օգտագործվում է ի շահ Կողմերի և նրանց ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի հետ միասին համարվում է Կողմերի ընդհանուր գույք:

3.3. Կողմերը ընդհանուր գույքն օգտագործում են ընդհանուր համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանով սահմանված կարգով:

3.4. Ընդհանուր գույքի պահպանման կապակցությամբ Կողմերի պարտականությունները և այդ պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերի հատուցման

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:23:28 GMT+04:00

կատարվում է համատեղ գործունեությունում Կողմերի ներդրած ավանդներին համամասնորեն:

3.5. Սույն պայմանագիրը ստորագրելու պահին ընդհանուր բաժնային սեփականությունում Կողմերի բաժնեմասերը կազմում են՝

«Ճանապարհ» ՍՊԸ – 55%,

«Արցախճան» ՍՊԸ – 45%:

## 4. Շահույթի բաշխումը

4.1. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է աշխատանքների ավարտից հետո:

4.2. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստաված շահույթը բաշխվում է Կողմերի միջև համատեղ համաձայնությամբ:

## 5. Կողմերի պատասխանատվությունն ընդհանուր պարտավորությունների համար

5.1. Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրն ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով՝ անկախ դրանց ծագման հիմքից:

## 6. Բաժնեմասերի ստացման կարգը

6.1. Կողմերն իրավունք ունեն ազատ տնօրինելու ընդհանուր բաժնային սեփականությունում իրենց պատկանող բաժնեմասը՝ մյուս կողմի, այդ բաժնեմասը գնելու նախատատվության իրավունքի պահպանման պայմանով:

6.2. Բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի կիրառման կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

## 7. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանարի կողմերի պարտավորությունների լիիրավ կատարման ավարտը:

7.2. Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող Կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս Կողմից՝ դուրս գալու օրվանից ոչ ուշ քան 3 ամիս առաջ:

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:23:48 GMT+04:00

7.3. Պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունն ստացվելուց հետո, 3 ամսվա ընթացքում, Կողմերը պետք է բաժանեն ընդհանուր բաժնային սեփականություն համարվող գույքը:

7.4. Սույն պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝

7.4.1. Անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու.

7.4.2. Սնանկ ճանաչելու.

7.4.3. Սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու կամ վերակազմակերպվելու դեպքերում:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

8.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծվում են դատական կարգով:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**"ԳՈՐԾԸՆԿԵՐ-1"**

**«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Աճառյան 60 շինություններ**
**ՀՎՀՀ 03512651,**
**"Արդշինբանկ" ՓԲԸ, Էրեբունի մ/ճ**
**Հ/Հ 24723-00165260010**

**Գլխավոր Տնօրեն**
**Տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

**Է. ԲԵԶՈՅԱՆ**
ստորագրություն
**Կ.Տ.**

**"ԳՈՐԾԸՆԿԵՐ-2"**

**«ԱՐՑԱԽՃԱՆ» ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24**

**ՀՎՀՀ 00915384,**
**"Արդշինբանկ" ՓԲԸ, Էրեբունի մ/ճ**
**Հ/Հ 24723-03749820000**

**Գործադիր Տնօրեն**

**Ռ. Սողոյան**
ստորագրություն
**Կ.Տ.**

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:24:03 GMT+04:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ԱՐՑԱԽՃԱՆ"
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
"ARTSAKHROAD"
LIMITED LIABILITY COMPANY

ք. Երևան

29 Մարտի 2021թ.

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

“Արցախճան” ՍՊԸ-ն ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Ռոբերտ Սողոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, լիազորում է “Ճանապարհ” ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 03512651/ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Էդուարդ Բեզոյանին /նույնականացման քարտ՝ID CARD 000335752, տրված 24.06.2013թ. 006-ի կողմից/, 29.03.2021թ-ին ընկերությունների միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության Կոմիտե-ի կողմից ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով հայտարարված «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների մրցույթում հանդես գալու “Արցախճան” ՍՊ ընկերության անունից, կնքել և/կամ ստորագրելու փաստաթղթեր, հանձնել մրցութային առաջարկ, վարել բանակցություններ և իրականացնելու այլ գործողություններ, որոնք կբխեն “Ճանապարհ” ՍՊԸ և “Արցախճան” ՍՊԸ ՀՁ շահերից:

Գործադիր տնօրեն Ռ. Սողոյան

«ԱՐՑԱԽՃԱՆ»
"АРЦАХДОР"
"ARTSAKHROAD"
00915384

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:24:21 GMT+04:00

Երևան Աճառյան 1-ին նրբանցք 24
E-mail: artsakhroad@gmail.com
Հեռ +374(10)628785
Fax +374(10)628785

Yerevan Acharyan str 1- st drive 24
E-mail: artsakhroad@gmail.com
Tel +374(10)628785
Fax +374(10)628785

Ընկերության ժամանակավոր օգտագործման տրված գույքի պատահական կորստի կամ վնասման ռիսկը դրվում է այդ գույքը փոխանցած մասնակցի վրա:

5.4. Ընկերությունում ստեղծվում է պահուստային /ապահովագրական/ կապիտալ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Այս կապիտալի ձևավորումը իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասնահանումների միջոցով մինչև նախատեսված չափերին հասնելը: Պահուստային կապիտալ կատարվող մասնահանումների չափը սահմանվում է մաքուր շահույթի 5 տոկոսից ոչ պակաս: Պահուստային կապիտալի միջոցների ծախսման կարգը որոշվում է մասնակիցների ընդհանուր ժողովում կայացված որոշումներով:

5.5. Ընկերության հաշվապահական հաշվառումն ու հաշվետվությունը կատարվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

## 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է նրա մասնակիցների նախօրոք որոշված ավանդների արժեքից: Այն կազմում է 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով մեկ բաժնեմասից:

Ընկերության 1 բաժնեմասը տեղաբաշխված է, ամբողջությամբ վճարված և սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ քաղաքացի, Ընկերության միակ մասնակից Էդուարդ Բեզոյանին (անձնագիր` AK 0471793, տրված` 26.03.2010թ., 001 կողմից, բն. հասցե` ՀՀ, ք. Երևան, Ավան, Ավան Առինջ չ.2/2, բն.71):

6.2. Ներդրված գույքի արժեքի փոփոխությունը և կանոնադրական կապիտալում մասնակիցների կողմից կատարված լրացուցիչ ներդրումները չեն ազդում յուրաքանչյուր մասնակցի ունեցած բաժնեմասի վրա, եթե սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ չեն մտցվել սույն կանոնադրությունում:

6.3.Իր ներդրումն ամբողջությամբ կատարած Ընկերության մասնակցին տրվում է վկայական, որը չի դասվում արժեթղթերի կարգին:

6.4.Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրության 4.2. կետի վերջին մասով սահմանված կարգով:

6.5.Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն Ընկերության մնացած մասնակիցների միաձայն համաձայնությամբ: Ընդ որում բաժնեմասն անցնելու համար համաձայնություն չտալու, ինչպես նաև ժառանգի /իրավահաջորդի/ բաժնեմասից հրաժարվելու դեպքում դրա արժեքի վճարումը կատարվում է սույն կանոնադրության 4.6. կետում սահմանված կարգով:

Ընկերության մասնակիցների համաձայնությունը Ընկերության մասնակցի բաժնեմասը նրա ժառանգներին կամ իրավաբանական անձանց իրավահաջորդներին անցնելու համար համարվում է ստացված, եթե Ընկերության մասնակիցներին դիմելուց 30 օրվա ընթացքում ստացվել է բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը, կամ ոչ մի մասնակցից չի ստացվել գրավոր մերժում:

6.6.Ընկերությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:

Կանոնադրական կապիտալի մեծացում կարելի է միայն այն բանից հետո, երբ բոլոր մասնակիցները կատարել են իրենց ներդրումները:

Ընկերության կանոնադրական կապիտալի մեծացումը կարող է կատարվել.

- Ընկերության գույքի հաշվին.
- Ընկերության մասնակիցների լրացուցիչ ներդրումների հաշվին.
- երրորդ անձանց ներդրումների հաշվին:

6.7. Ընկերության մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ներդրումների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման մասին որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:24:36 GMT+04:00

«ԱՐՑԱԽՃԱՆ» ՍՊԸ

կանոնադրության հավելված

«ԱՐՑԱԽՃԱՆ»

<u>ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ</u>

<u>ՀԻՆԱԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿ</u>

| Մասնակցի անունը, ազգանունը անձնագրի տվյալները, հասցեն | Բաժնեմասերի քանակը | Բաժնեմասերի չափը (տոկոսով) | ստորագրություն |
|---|---|---|---|
| 1. **Սերիկ Սողոյանը** Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ AN0468977, տրված՝ 13.05.2013թ., 006-ի՝ կողմից, ՀԾՀ՝ 5102570218, հաշվառման հասցեն՝ ՀՀ ք.Երևան, Ավան Առինջ 1 մկրշ. շենք 2/2, բն. 71: | 1 | 50 | |
| 2. **«ԱՐՑԱԽՃԱՆ» ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ** գրանցման համար՝ 443.120.20929, գրանցման ամսաթիվ՝ 18.04.2005թ., ՀՎՀՀ՝90009361, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն)՝ Արցախ, Ստեփանակերտ, Ալեքսեյ Հեքիմյան փ, 8ա, բն.23 | 1 | 50 | |



Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:24:54 GMT+04:00

«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ կանոնադրության հավելված

«Արցախճան» ինստիտուտ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
բաժնետերերի ցուցակ

| Բաժնետիրոջ անունը ,ազգանունը անձնագրի տվյալները հասցեն | բաժնետոմսերի քանակը | բաժնետոմսի արժեքը |
|---|---|---|
| Լիդա Սմբատի Չոբանյան անձ. AB 0233316, տրված 03.12.1996թ.` 039-ի կողմից ՀՀ ք. Երևան , Սովխոզային փողոց 71 տուն | 20 | 5 000 |

«Արցախճան» ինստիտուտ
ՓԲԸ -ի միակ բաժնետեր

Լ. ՉՈԲԱՆՅԱՆ

Digitally signed by BEZOYAN EDUARD 1701560348
Date: 2021.03.30 12:25:15 GMT+04:00